**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/11439-2025

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-1010-17.02.2025-ՊԱ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկություն- ները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

Առաջարկում ենք օրենքի նախագծի՝

I. 3-րդ հոդվածի 2-րդ կետով գործող օրենքի 21-րդ հոդվածում լրացվող 8-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

1. 1-ին կետում «դրա համար նախատեսված գրանցամատյանում» բառերը առաջարկում ենք փոխարինել «էլեկտրոնային առողջապահության համակարգում» բառերով,

2. իսկ 2-րդ կետում «նրա ամբուլատոր բժշկական քարտում և կալանավորվածներին պահելու վայր ընդունվածների բժշկական զննության մատյանում» բառերը փոխարինել «էլեկտրոնային առողջապահության համակարգում» բառերով:

3. 3-րդ հոդվածի 2-րդ կետով գործող օրենքի 21-րդ հոդվածում լրացվող 10-րդ մասի առաջին նախադասության մեջ «ձևաթղթում» բառի փոխարեն լրացնել «մեջ» բառը:

II. 4-րդ հոդվածի 5-րդ կետում մասում «արձանագրության» բառից հետո լրացնել «վերաբերյալ իրազեկման» բառերը:

III. 6-րդ հոդվածը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով «Ձերբակալված և կալանավորված անձանց մասին» օրենքի 21.1-ին հոդվածում լրացվող 8-րդ մասն ուժի մեջ է մտնում բժշկական զննության արդյունքների գրանցման համար նախատեսված էլեկտրոնային

գործիքների ներդրման պահից: Մինչ այդ բժշկական զննության արդյունքները գրանցվում են՝

1) ձերբակալված անձի դեպքում՝ դրա համար նախատեսված գրանցամատյանում և անձնական գործում.

2) կալանավորված անձի դեպքում՝ նրա ամբուլատոր բժշկական քարտում և կալանվորվածներին պահելու վայր ընդունվածների բժշկական զննության մատյանում:

3. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ չորս ամսվա ընթացքում:»:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ